

Ա. Ղափրյան

ԳՐԱԲԱՐԻ ՀՈՒՆՎԱԿԱՆ ՍՏԱԴԻԱԼ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Հայոց լեզվի քերականությունը շատ հին պատմություն ունի. այդ քերականությունը կազմվել է հունական քերականագիտական ուղղության հիմունքներով: Առաջին քերականագետները Դիոնիսիոս Թրակացու քերականության մեկնիչներն են, որոնք 6—7-րդ դարերից սկզբնավորել են մեր քերականությունը: Նրանց քերականությունը դիֆերենցված քերականություն չէր. այդպես էին նաև հունական, լատինական քերականությունները: Քերականության մեջ այդ վիճակը շարունակվեց մինչև նոր դարերը, երբ ձևավորվեց, այսպես կոչված, նորմատիվ քերականությունը (16—17-րդ դարերում): Հայ քերականագիտությունն էլ նույն զարգացումն ապրեց, հայ նորմատիվ քերականությունը նույնպես նոր դարերի ծնունդ է: Ամենակատարյալը այդ տեսակետից իր դարերի համար Joh. Johachimi Schröderi-ի (Արամեան լեզուին գանձ) Thesaurus linguae armenicae, antiquae et hodiernae վերնագիրը կրող քերականությունն է, որ լույս է տեսել Ամստերդամում 1711 թ.: Այդ քերականության մեջ նորմատիվ կարգով տրված է հայերենի հոլովումը, ըստ որում հեղինակը հայերենում դնում է հետևյալ հոլովները. անվանական (Nominativus), սեռական (Genitivus), տրական (Dativus), հայցական (Accusativus), կոչական (Vocativus), առողական (Ablativus), պատմական (Narrativus), ներգոյական (Commorativus) և շրջագայական (Circumlativus), այսինքն ընդամենը տասը հոլով:

Նկատելի է, որ հեղինակը մեր հոլովումը կազմել է լատինական լեզվի քերականության նմանողությամբ: Գիտենք, որ լատիներեն լեզվի հոլովումը որոշում են ուղղական-սեռական վերջավորություններով, այսինքն բառի այս կամ այն հոլովման պատկանելի որոշում են ուղղականի վերջավորությամբ, որ սեռականում ընդունում է այս կամ այն ձևը:

Օրինակ՝

Հատիներեն լեզվի մեջ 3-րդ հոլովման են պատկանում հետևյալ գոյականները.

masculina	{	o, or, os, e-ի վերջավորություններով և անհավասարավանկ
		e-s վերջավորությամբ.
feminina	{	as, is, aus վերջավորություններով. նախորդ բաղաձայն ունեցող վերջավորությամբ և հավասարավանկ e-s վերջավորությամբ.
neutra	{	e, i, men, ma վերջավորությամբ և ar, ur, us (gen. oris eris, ūris) վերջավորություններով:

Այսպես է վարվում Շրոդերը (Sdiroder) նաև հայերենի հետ սն և

տն վերջավորություն, իսկ սեռականում՝ ամ և գործիականում՝ ամբ վերջավորությունը. օրինակ՝ ակն, ակամ, ակամբ և այլն: Այդ նույն ձևով նա սահմանում է երկրորդ հոլովումը, երրորդ հոլովումը (ն, սեռ. ին, գործ. ամբ), չորրորդ հոլովումը և այլն:

Հետաքրքրական է, որ յոթերորդ հոլովման մեջ դնում են նաև «է» բառը, որ ընդունում է իբրև գոյական (eus, existens—գոյություն, լինելություն):

Տասը կանոնավոր հոլովումներից բացի՝ նա ընդունում է տասը անկանոն հոլովում, ինչպես՝ Աղամ-Աղամայ-Աղամալ, տիւ-տուընջևն կամ տուընջիան, կին-կնոջ, գյուղ-գեղոյ, փոքր-փոքու, հայր-հոր, քոյր-քեռ և այլն:

Նրան հաջորդող հեղինակը, որ Բաղդասար Դպիրն է, 1768 թվին Գոստանդնուպոլսում հրատարակած իր աշխարհաբար լեզվով գրած գրաբարի քերականության մեջ, նույնպես ընդունելով տասը հոլով, մի քիչ փոխում է նրանց անունները: Նա հոլովները կոչում է հետևյալ կերպ. Ուղղական՝ քար, Սեռական՝ քարի, Գործիական՝ քարիւ, Արտագոյական՝ գքարիւ, Հայցական՝ գքար, Պատմական՝ գքարէ, Սկզբնական՝ ի քարէ, Տրական՝ ի քար, Ներգոյական՝ ի քարի, Կոչական՝ ով քար:

Հոլովման մասին խոսելիս Բաղդասար Դպիրը գտնում է. «... ամենքն տասնևեօթն են և են սոքա. ի. օյ, ւօյ, ու, այ, եայ, ամ, եան, ին, եր, եղ, օր, սը, ևո, եղջ, ուր» (էջ 33):

Դրանցից 12-ը կոչում է տարածական, որովհետև շատ բառեր են ենթարկվում այդ հոլովումներին. իսկ մնացած հոլովումները կոչում է առանձնական, որովհետև կամ մեկ բառ է պատկանում այդ հոլովման կամ երկուերեք բառ: Բաղդասար Դպիրը առանձնական հոլովումների մեջ դնում է Շրոդերի մոտ և իրենից հետո գրված քերականությունների մեջ անկանոն կամ զարտուղի կոչված հոլովումները, որոնք են՝ հայր-հոր, այր-առն, կին-կնոջ, քոյր-քեռ, գիւղ-գեղջ, օր-առուր: Ընդամենը ստացվում է 18 հոլովում (հեղինակի մոտ ասված է 17):

Այսպիսով, Բաղդասար Դպիրը հասկանալով, որ հայերեն լեզուն ուղղական հոլովով պատկանություն չի տալիս հոլովումը որոշելու, հրաժարվում է դրանից և իբրև հոլովման հատկանիշ վերցնում է բառի սեռական ելույթի վերջավորությունը կամ սեռական ձևի վերջին երկու երեք տառը (օրինակ՝ աստղ-աստեղ—եղ հոլովում). Բաղդասար Դպիրը հոլովների անվան մեջ ևս որոշ փոփոխություն է կատարում՝ անվանականի փոխարեն կոչում է ուղղական, շրջագայականի փոխարեն կոչում է արտագոյական, առողականի փոխարեն կոչում է սկզբնական:

1779 թվին լույս է տեսնում Միքայել Չամչյանի քերականությունը, որը շարունակում է իր նախորդների տրադիցիան, սակայն որոշ ուղղում մտցնելով:

Չամչյանը նույնպես ընդունում է տասը հոլով, բայց Շրոդերի առողական և Բաղդասար Դպրի սկզբնական տերմինների փոխարեն գործածում է բացառական, Շրոդերի շրջագայական և Բաղդասար Դպրի արտագոյական տերմինների փոխարեն գործ է ածում պարառական: Այսպիսով՝ Չամչյանի մոտ ստացվում է հոլովների հետևյալ կարգը. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական և կոչական:

Չամչյանն ընդունում է տասնչորս հոլովում և վեց հատուկ հոլով-
մունք անուանց, ըստ որոց հոլովին անուանք ինն, այս են՝ Տէր, այր, հայր,
մայր, եղբայր, քոյր, կին, օր՝ և գիւղ կամ գետը և բարդեալք սոցա»
(էջ 34)։

Տասնչորս հոլովումները հետեյալներն են՝ ի-իւ, ի-աւ, ոյ-ով, աոյ-եաւ,
ան-ամր, եսն-եամր, ին-ամր, ու-ու, ու-ումր, եր-երր, եղ-եղր, այ-աւ,
եայ-եաւ և եայց։

Չամչյանի քերականութիւնը շատ մեծ հեղինակութիւն ուներ մեր
հասարակայնութեան մեջ և մեծ ազդեցութիւն ունեցաւ հետագա քերա-
կանագետների վրա։ Շատ քչերին հաջողվեց դուրս դալ Չամչյանի քերա-
կանագիտական ըմբռնումների սահմաններից։

1815 թ. Վենետիկում աշխարհաբար լեզվով հրատարակվում է Գրբրիել
Ավետիքյանի «Քերականութիւն հայկական»-ը։ Հեղինակը Չամչյանի հոլո-
վական կարգը չի խախտում, հոլովների անունները թողնում է նույնը,
միայն բացատրում է ամեն մի հոլովի հիմնական նշանակութիւնը։ Հոլով-
ման մեջ մտցնում է զգալի բարեփոխութիւն, նա իր եզրակացութիւն-
ները ամփոփում է իր քերականութեան 6-րդ էջում հետեյալ խոսքերով.
«Հայու լեզուն քանի հոլովում ունենալը քերականութիւնը պրոզներուն նա-
յինք նե, իրեքեն սկսան ինչպան քսանը հասուցին։ Դժվար է որոշալ
համբանքի մը հապել. բայց քիչ հոլովումը լեզվին ընդարձակութիւնը
կըկորսնցնե, շատն ալ՝ ավելի կըտարտրդնե լեզուն, սորվողին ալ կըվախ-
ցընե, անճրկիլ կըբերե։ Ասոր վրա նոր քննութիւնը րինք, նմանները միաց-
նելով երկու կարգ կըբաժնենք հոլովմունքը. առաջին պարզ կամ կանո-
նավոր. երկրորդը խառն կամ անկանոն»։

Այս բաժանումը կատարելուց հետո հեղինակը հայերենում գտնում է
վեց պարզ կամ կանոնավոր հոլովում և չորս խառն կամ անկանոն հոլովում,
Վեց կանոնավոր հոլովումները հետեյալներն են՝ ի-իւ, ի-աւ, ոյ-ով, ան-
ամր, ու-ու, եր-երր, նաև եղ-եղր։

Խառն կամ անկանոն հոլովման մեջ դնում է հետեյալները՝ աոյ-աւ,
կամ. եաւ, ին-ամր, ոյ-աւ, այ. եայ-աւ, եաւ. այսպիսով Ավետիքյանը
փորձում է հազթահարել նների տրադիցիան, գտնել որևէ օրինաչափութիւն
պարզացնելու գրաբարի հոլովումը։ Ավետիքյանը կրճատում է հոլովների
թիվը, ընդունելով միայն անդակում, սեռակում, տրակում, եայցակում, բա-
ցառակում և զօրծիակում, նա գտնում է, որ պատմակում, պարառակում,
ներգոյակում և կոչակում «դատ հոլով ըսելու չէ» և հետագայում, իր գրքի
249--253 էջերում, բացատրում է. «Թե ինչու դրանք հոլով չեն, ու հանձնա-
րարում դուրս դցել։ Նա հիշեցնում է, որ հին քերականի թարգմանիչը
վեց հոլով է դրել, ավելացնելով հոռում (հույն և լատին) քերականութեան
վրա նաև առաքականը, այսինքն գործիականը, որովհետև հոռումը (հու-
նարենը) — (լ.) հինգ կերպ կամ հոլով ունի. այս է՝ ուղղական, սեռական,
տրական, հայցական, կոչական։ Լատինը վեցը ունի, ավելացնելով բացա-
ռականը» (էջ 249)։

«Թիվոյան հինգ հոլով միայն կը դնե հայու, ձգելով կոչականը,
Ոսկան ութը կըսե, չճանաչելով պատմական և պարառական հոլով։ Անկեց
ետքիները՝ Կալամոս, Սիմոն, Շրոդեր և այլք, տասը հոլով շինեցին, և
նույնը տարածեցաւ ինչպան մեր ատենը» (էջ 251)։

Ավետիքյանի սահմանած հոլովների կարգը պահպանվեց մինչև այժմ, միայն մի քանի քերականներ փոքր կատարեցին հետադարձ քայլ անելու ավելացնելու հայերենի մեջ հոլովների թիվը:

Սալանթյանը իր քերականությունը հրատարակել է Մոսկվայում 1827 թ.: Քերականությունը գրված է գրարար լեզվով. քերականական սխտեմից երևում է, որ հեղինակը օգտվել է Բաղդասար Բարի քերականությունից, որովհետև պահպանում է նրա սահմանած հոլովների կարգը, դուրս գցելով միայն կոչական հոլովը: Տերմինոլոգիան պահպանում է Չամչյանինը. նա դնում է հոլովների հետևյալ կարգը. ուղղական, սեռական, գործիական, պարտական, հայցական, բացառական, պատմական, տրական և ներգոյական:

Սալանթյանն ընդունում է տասը հոլովում՝ ի-իւ, ի-աւ, ոյ-ով, ոյ-եւ, ան-ամբ, ու-ու, եր-երբ || երաւ, օր-արբ, այ (եայ)-աւ (եաւ):

Յուրաքանչյուր հոլովման աղյուսակի վերջում հեղինակը տալիս է բոլոր այն բառերը, որոնք ենթարկվում են տվյալ հոլովման, և ապա այն բառերը, որոնք, որոշ նմանություն ունենալով՝ շեղվում են այդ հոլովումից. կոչելով դրանք արտուղի (որք ի հոլովս բսչ զարտուղին ի պատկերէս):

1852 թվին Վենետիկում հրատարակվում է Արսեն Բագրատունու «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց», որ զրագետների մոտ կրում է «Զարգացելոց» անունը: Այդ քերականությունը բաղկացած է 740 էջից, մանրատառ տպագրված, և կաղմում է բոլոր քերականություններից ամենամանրամասնը և ամենամանրակրկիտը: Հետագայի ոչ մի քերականություն իր սխտեմով ու ծավալով չի գերադանցել այս հեղինակի գործին: Իր բովանդակությամբ էլ հոյակապ մի աշխատություն է դա, որի նմանը օտարներն էլ քիչ ունեն: Չնայած այդպիսի մանրամասնություններին, Բագրատունու քերականության հոլովման կառուցվածքը իր բոլոր նախորդներից գերադանց է և պարզ: Առաջին անգամ այս հեղինակն է համեմատաբար լավ ըմբռնում հայերենի հոլովման էությունը և արտացոլում իր քերականության մեջ: Բագրատունին գոյականների հոլովումը բաժանում է երկու տիպի՝ պարզ և խառն: Պարզ հոլովում համարում է մեկ ձայնավոր հոլովիչ ունեցողին. դրանց թիվը ընդամենը հինգ է՝ ա, ե, ի, ո, ւ: Խառն հոլովման մեջ զետեղում է երկու հոլովիչ ունեցող գոյականներ, ընդամենը երկու՝ ի-ա, ո-ա:

Հեղինակը հայերենի մեջ գտնում է ընդամենը վեց հոլով, որ դասավորում է հետևյալ կերպ. ուղղական, սեռական, տրական, գործիական, բացառական, հայցական: Այսպիսով, այս խնդրում վերջնականապես ազատվելով իր նախորդների սխալից, որ բխում էր հայերենը հունարեն կամ լատիներեն լեզուների վրա ձևիլու մոտեցումից, Բագրատունին ընդհուպ մոտենում է գրաբարի հոլովման սպեցիֆիկումը հասկանալուն:

Այս հեղինակը 19-րդ դարի հայ քերականագիտության զազաթն է: Հետագայի հեղինակները չեն կարողանում նրան ոչնչով գերադանցել, ընդհակառակն, հաճախ նրա ընդունած առաջադեմ սկզբունքներից ետ են քաշվում ի վնաս իրենց աշխատության գիտականության:

Իսախանյանի հոլովումից՝ Բագրատունին ընդունում է հինգ զարտուղի հոլովում, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է կամ

մոտենում է համապատասխան կանոնավոր հոլովմանը, նա ընդունում է. «Ջարտուղի են հոլովմունք անուանց, ինչ որք նման ղոլով միում կանոնաւորացն՝ առյաճախ և հասարակ սովորութեամբ ղարտուղեալ են ուրեք ի նոցանէ» (էջ 34):

Առաջին հոլովումից ղարտուղյալները նա համարում է այր, հայր, մայր, եղբայր, կիճ բառերը և դրանցով բարդվածները. երկրորդ հոլովումից ղարտուղյալը համարում է քայր բառը և դրանից բարդվածները, երրորդ հոլովման ղարտուղյալ համարում է գիւլ բառը և դրանով բարդվածները, իսկ հինգերորդ հոլովման՝ օր բառը և դրանով բարդվածները:

1885 թվին հրատարակված է Այսլոնյան-Չալըխյանի քերականությունը: Թեև այդ քերականությունը բավական մշակված ձևերով է, բայց հոլովման սխառնի հարցում որոշ նահանջ է Բագրատունուց: Այս քերականության մեջ ընդունված է տասը հոլովում, որոնք են՝ ի. ի-ա, ոյ-ով, ոյ-եաւ, ու, ան, եան, ե, այ-աւ:

Դրանից դուրս հետևյալ բառերը համարվում են ղարտուղի կամ անկանոն հոլովման բառեր՝ այր, տէր, հայր, քայր, կիճ, գիւղ, օր և տիւ:

1899 թվին առաջին անգամ և 1910 թվին երկրորդ անգամ լույս է տեսնում Ս. Մալխասյանի «Գրաբարի հոլովումն ու խոնարհումը և նախադիրները»:

Հեղինակն ընդունում է հինգ ձայնավոր հոլովում և իր սխառնը կառուցում է Բագրատունու նման, սակայն հների նման նա ընդունում է նաև բաղաձայն հոլովում, ինչպես օր հոլովումը: Հեղինակը իր այդ աշխատության մեջ տալիս է նաև հոլովակերտիչի մասին որոշ գաղափար, որ մի տեսակ նորություն է: Թեև այս հեղինակի ըմբռնումները հայերենի հոլովման մասին ավելի առաջադեմ են, այնուամենայնիվ հեղինակը մինչև վերջ չի բացահայտում հայերենի հոլովման առանձնահատկությունը:

Նա ընդունում է նաև ղարտուղի հոլովում, որի մեջ դնում է քայր, մայր, այր, կիճ և գիւղ բառերը:

1903 թվին լույս է տեսել մեծ հայագետ Մառի «Грамматика древне-армянского языка» աշխատությունը, որ գրաբարի լավագույն քերականություններից է: Այդ աշխատությունը բարձր է նաև իբրև լեզվաբանական գործ, բայց հոլովման սխառնը այստեղ ևս այլ կերպ է դրված: Մառը գտնում է, որ գրաբարը ունի ձայնավոր, բաղաձայն և նայական հոլովում, աչքի առաջ ունենալով հոլովվող բառի հիմքը:

1936 թվին լույս տեսան քերականության երկու դասագրքեր, մեկը Հրաչյա Աճառյանինը, որը ապակետիպ է և կրում է «Գրաբարի ուսուցիչ» վերնագիրը, իսկ մյուսը՝ Մ. Արեղյանինը, որ կրում է «Գրաբարի քերականություն» վերնագիրը և տպագիր է: Վերջին աշխատությունը իսկապես հեղինակի՝ 1907 թվին լույս ընծայած «Գրաբարի քերականություն» գրքի երկրորդ վերամշակված հրատարակությունն է:

Հ. Աճառյանի քերականության մեջ պահպանված է Բագրատունու քերականության հոլովման սկզբունքը, այսինքն՝ իբրև հոլովման հատկանիշ ընդունվում է ձայնավորը: Հեղինակն ընդունում է հետևյալ հոլովումները՝ ի, ի-ա, օ, ու, ա:

Այն բառերը, որոնք հոլովման ժամանակ իրենց արմատի մեջ ընդունում են որևէ փոփոխություն, հեղինակը վերցնում է առանձին և կո-Տեղեկագիր 1.—4

չու՛մ է միօմեօնկավօր հոլովման բառեր (հիմն-հիման, գառն-գառին, տարր-տարեր, աստղ-աստեղ, փոքր-փոքու, արիւն-արեան, մեծութիւն-մեծութեան, ձի-ձիոյ,¹ որդի-որդւոյ, թաղուհի-թաղուհւոյ)։ Բացի դրանից հեղինակն ընդունում է նաև անկանոն հոլովում, որի մեջ գետեղվում են նույն բառերը, ինչ բառեր որ գետեղված են Այսրեյան-Չալըխյանի գրքում։

Կարելի է ասել, որ մեր բոլոր քերականագետների համեմատությամբ գրարարի հոլովման առանձնահատկությունը ճիշտ հասկանալուն ամենամոտն է Հ. Աճառյանը։

Դրան հակառակ, Մ. Արեղյանի քերականությունը, որւոյս է ընծայված նույն տարին, հայերենի հոլովման սխտեմի առանձնահատկությունը չի գրսևորում։ Ճիշտ է, հեղինակն ընդունում է ի, ու, օյ, այ հոլովումներ, իսկ խառը հոլովումը կոչում է շեղում։ Բայց և ընդունում է ան, եր, եզ բաղաձայն հոլովում, մի բան, որ հայերենին հատուկ չէ, որովհետև եր, եզ վերջավորության մեջ ր և զ արմատական հնչյուններ են, հոլովման նշանն է ն ձայնավորը։ Հեղինակն ընդունում է նաև անկանոն հոլովումներ։

Այսպիսով՝ Արեղյանի հոլովական սխտեմը մի տեսակ դարձ է դեպի հին քերականությունը։

Ինչպես ցույց է տալիս մեր վերևի էքսկուրսը, հայ քերականագիտությունը սկիզբ է առել օտար քերականությունների ազդեցությամբ։ Դրաբարի քերականությունը կազմվել է հունարենի և լատիներենի քերականությունների նմանողությամբ, որտեղ արտացոլվել են այդ լեզուների առանձնահատկությունները։

Հայերենի բուն առանձնահատկությունը սկզբներում երևան չի եկել։ Հայ հեղինակները, հունարենն ու լատիներենը և նրանց քերականությունը համարելով տիպար, արտացոլել են իրենց այդ վերաբերմունքը նրանով, որ հայերենի մեջ տեսել են այնպիսի հատկություններ, որ ունեն լատիներենն ու հունարենը, և չեն տեսել այնպիսի հատկություններ, որոնք հատուկ են միայն հայերենին։ Հունարենի, նույնպես և լատիներենի մեջ եղած լեզվական հատկությունները համարելով կատարելություն, մեր հեղինակները ցանկացել են հայերենի մեջ ևս երևան բերել այդ կատարելությունը, ուստի երկաթ ժամանակ հայերենի քերականությունը կազմել են հունարենի քերականության անմիջական կամ միջանկյալ ազդեցությամբ։ Քչերին է հաջողվել (Բագրատունի, Աճառյան) մոտենալ հայերենի հոլովման առանձնահատկությունը հասկանալու գաղափարին, սակայն ոչ մեկին չի հաջողվել հայերենի առանձնահատկությունն ըմբռնել մինչև վերջ։ Իհարկե, մեր քերականագետները կատարել են հսկայական աշխատանք, զարմանքի և հիացմունքի արժանի աշխատանք, և մեզ չի հաջողվի այդ գործում նրանց մոտավորապես անդամ նմանվել, սակայն նրանց աշխատանքը միշտ ունեցել է մի թերություն և միևնույն թերությունը. դա այն է, որ հայերենի քերականությունը կազմելիս նրանք չեն կարողացել ազատվել օտար քերականագիտության ազդեցությունից, չեն կարողացել ազատվել հունարեն և լատիներեն լեզուները լեզվական տիպար ընդունելու գաղափարից, զրաբարը միշտ ստորադասել են այդ լեզուներին և փորձել են այն հասկանալ հունարենի և լատիներենի լեզվական գերազանցության, լեզվական

¹ Կարծում ենք, որ «ձի» բառը թյուրիմացաբար է ընկել այս շարքը։

կատարելության զազափարի լույսի տակ, նրանց թվացել է, թե գրաբար լեզուն, որ իրենց սեփականն է, չէր կարող լինել առաքյալ, որքան հունարենն ու լատիներենը: Այգպես մտածելը գիտվել է առնվազն հանդգնություն: Դա, իհարկե, օտարամոլությունն է, դա ավելի շուտ տրադիցիային գերի լինելն է, դա ավելի շուտ մի տեսակ սխալ համեստություն է, որից շատ օգուտներ ստանալ չի կարելի: Եզել են քերականագետներ, որոնց գիտական պատրաստականությունը և խորաթափանց միտքը թելադրել է դուրս գալ համեստության սահմաններից, բայց նրանք այնքան զսպված մարդիկ են եզել, որ վախեցել են ծայրահեղությունից, ուստի կանգ են առել կես ճանապարհին:

Մենք կարծում ենք, որ գրաբարի հոլովական սխառմն ըմբռնելու համար պետք է ազատվել ամեն տեսակ տրադիցիաներից, կանխակալ կարծիքներից և կեզծ համեստությունից: Եթե մեզամ բնդունենք, որ գրաբարի թեքակամ սխառմը եմդերուպակամ է, մալա պիտի բնդունենք մաև, որ մալս եմդերուպակամ թեքակամ սխառմը դասակամ կերպով մարտաեալալմած է միայն գրաբարի մեջ: Գրաբարի հոլովական համակարգն անսխալ հասկանալու համար մենք առաջարկում ենք ընդունել, որ գրաբարն ունի հոլովման երկու հատկանիշ, դրանցից մեկը՝ կոչելով հոլովիչ, մյուսը՝ հոլովադիչ (հոլովակերտիչ):

Հոլովիչ կոչում ենք այն նշանը, որը ցույց է տալիս թեքում, տվյալ դեպքում՝ հոլովում, իսկ հոլովակադիչ կոչում ենք այն նշանը, որը ցույց է տալիս կցում, տվյալ դեպքում՝ հոլով: Հոլովման հատկանիշը երևան է գալիս գրաբարի թեք եղակի և թեք հոգնակի թեք հոլովումներում (սեռական, արական, բացառական և գործիական):

Գրաբարի հոլովիչները, ինչպես նկատում ենք ամբողջ սխառմից, ընդամենը հինգ են՝ ա, ե, ի, ու, օւ. դրանք բոլորը գրաբարի հիմնական ձայնավորներն են, բացի ու-ից, որը երկբարբառ է: Այս հոլովիչները հոլովման ընթացքում առկա են և՛ եզակի, և՛ հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում: Եթե դրանցից որևէ մեկը չկա, ապա այդ կապված է ոչ թե հոլովման սխառմի հետ, այլ գրաբարի հնչյունափոխության օրենքների հետ: Ըստ այդ օրենքների՝ ի, օւ հնչյուններն ունենում են անկում կամ սզում, ուստի եթե հոլովման ժամանակ չեղտը այդ հնչյունների վրայից առաջ է անցնում, այդ հնչյունները դուրս են ընկնում: Այդ պատճառով էլ հոլովման ժամանակ, եթե այդ հոլովիչները վերջին վանկից առաջ են ընկնում, նրանք հնչյունափոխվում են (օրինակ՝ անձն, անձին, յանձնէ): Ա, օ, ե հոլովիչները բոլոր թեք հոլովներում պահպանվում են, որովհետև գրաբար լեզվի մեջ նրանք հնչյունափոխության չեն ենթարկվում:

Գրաբար լեզվի սխառմը հասկանալու համար պետք է հաշվի առնել մեր մեկ ուրիշ առաջարկը ևս: Մենք առաջարկում ենք ներքին թեքում կոչել այն դեպքում, երբ հոլովիչը բառի կազմի մեջ է երևում, և մարտաֆին թեքում, երբ հոլովիչը բառի կազմից դուրս է: Արտաքին թեքման դեպքում, սովորաբար, հոլովիչն ավելանում է բառի ամբողջության վրա. օրինակ՝ գետ-դետսյ, բան-բանի, իսկ ներքին թեքման դեպքում՝ բառի արմատի կամ ածանցի մեջ մտնում է որևէ հոլովիչ, կամ դրանց մեջ եզած որևէ երկբարբառ վերածվում է ձայնավորի՝ հոլովիչի կամ այդ հոլովիչով կազմված մի այլ երկբարբառի. օրինակ՝ ֆոյլ-ֆեռ: Այստեղ ոչ երկբարբառը փոխա-

րինվել է Ե հոլովիչով, իսկ տուն>տան բառի հոլովման մեջ ու երկբար-
բառը վերածվել է ա հոլովիչի: Կարող է լինել նաև, որ հոլովման ժամա-
նակ ուղղականի արմատական ձայնավորը (երկբարբառի մաս կազմող),
իբրև հոլովիչ, պահպանվի բոլոր թեք հոլովներում. այդ դեպքում այդ ար-
մատական ձայնավորն ինքն է դառնում հոլովիչ. ինչպես այդ>առն: Այսպես՝
երբ նկատի առնենք մեր այդ երկու դրույթը, այն ժամանակ երևան կգա գրա-
րարի հոլովական համակարգի ամբողջ կատարելությունը: Նախօրոք ասենք,
որ գրաբարի մեջ հոլովակազմիչներն ըստ հոլովների հետեվյալներն են՝

Եզակի	Հոգնակի
Ուղղ. չկա	«ք»
Սեռ. «ն», կամ «ջ» կամ «նջ», կամ ոչինչ	«ց»
Տր. նույնը	«ց»
Հայց. չկա	«ս»
Բաց. «է»	«ց»
Գործ. «ւ», «վ», «ր»	«ւ», «վ», «ք», «բ»

Սեռականում «ն» հոլովակազմիչ ունեն հետևյալ բառերը՝ այր (առն),
աղջիկ (աղջկան), մանուկ (մանկան), գարուն (դարնան), տեսիլ (տեսիլան),
հանգիստ (հանգստեան), գալուստ (գալստեան), ժողովուրդ (ժողովրդեան),
ծնունդ (ծննդեան), վաղիւ (վաղուեան):

Սեռականում «ջ» հոլովակազմիչ ունեն հետևյալ բառերը՝ կին (կնոջ),
գիւղ (գեղջ) և «ո» հոլովման պատկանող մի շարք բառերի երկրորդական
գործածությունը՝ տեղի-տեղւոյ, գինի-գինւոյ, այգի-այգւոյ, տարի-տարւոյ,
բարի-բարւոյ, մի-միոյ, և այլն:

Սեռականում «նջ» հոլովակազմիչ ունի միայն տիւ (տուընջեան) բառը.
մյուս բոլոր բառերը սեռականում կորցրել են իրենց սեռական հոլովակազմիչը:

Տրական հոլովը (գոյականների) ունի նույն հոլովակազմիչները, ինչ
որ սեռականը. եզակի հայցականը հոլովակազմիչ չունի, բացառականն ունի
«է» հոլովակազմիչը, որ Ե-ից և Վ-ից հետո չի դրվում:

Գործիականն ունի շրթնատամնային բաղաձայն «վ» հոլովակազմիչը,
որ «ա», «ե» և «ի» ձայնավորներից հետո վերածվում է շրթնատամնային
կիսաձայն «ւ»-ի, քանի որ ոչ մի գրաբար բառում «ա», «ե» և «ի» ձայ-
նավորներից հետո «վ» չկա: «Ն», «դ» և «ր» բաղաձայններից հետո շրթնա-
տամնային վ-ն վերածվում է շրթնային Ե-ի: Ու մի գրաբար բառում «ր»
«դ» և «մ» բաղաձայններից հետո «վ» չի դրվում:

«Բ» շրթնայինի ազդեցությամբ նախորդ ատամնաոնգային «ն»-ն
վերածվում է շրթնաոնգային «մ»-ի (տամբ, շամբ):

Գրաբարի հոգնակի ուղղական հոլովակազմիչն է «ք». մի շարք (սահ-
մանափակ թվով) բառերում այդ «ք»-ն փոխարինվում է այլ մասնիկներով
(օրինակ՝ մարդիկ, նախարարեան, իշեար, մանկտի և այլն): Հոգնակի սե-
ռականի, տրականի և բացառականի հոլովակազմիչն է «ց» առանց բացա-
ռություն, որ ավելանում է սովորաբար եզակի սեռականի վրա: Հոգնակի
հայցականի «ս» հոլովակազմիչը դրվում է ուղղական ձևի «ք» հոլովակազ-
միչի փոխարեն: Գործիականի «ք» հոլովակազմիչը ավելանում է եզակի
գործիականի վրա:

¹ Նկատի չենք առնում միայն մարգիկ-մարդկան ձևը:

Եզակի բացառականի և գործիականի հոլովակազմիչները ավելանում են եզակի տրական ձևի վրա (գրաբարի հնչյունափոխության օրենքները պահպանվում են)։ Եթե արականը վերջավորվում է Թ-ով կամ Դ-ով, երբեմն նաև Ե-ով, բացառականում հոլովակազմիչ չի գրվում։ Վերջենք գրաբարի հոլովման մեկ օրինակ։

Եզակի	Հոգնակի
Ուզդ. թոյր	թորթ
Սեռ. թեռ	թերց
Տր. թեռ	թերց
Հայց. դթոյր	դթորս
Բաց. իթեռէ	ի թերց
Գործ. թերբ	թերբբ

Եզակի թվում սեռականի, արականի և հայցականի հոլովակազմիչները դուրս են ընկել։ Միայն մի շարք բառերի սեռականի հոլովակազմիչն է պահպանվել։

Բացառականի հոլովակազմիչը սեռականում «այ» և «ոյ» վերջավորությունն սաացող բառերի մեջ դուրս է ընկել, մյուսներում մնացել է։

Հոգնակի թվում բոլոր հոլովների հոլովակազմիչները պահպանվել են, միայն նույնացել են սեռականի, արականի և բացառականի հոլովակազմիչները (ց)։ Գրաբարի հոլովակազմիչները կցականության մնացորդներ են, որ ցույց են տալիս, թե գրաբարին նախորդող լեզուների հոլովումը կազմված է եղել կցական սխեմով։

Հաշվի առնելով այս ամենը, ներքևում բերում ենք հոլովումների աղյուսակները։

Ա ՀՈԼՈՎՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ԹԵԲՄԱՆ

ԱՐՏԱԳԻՆ ԹԵԲՄԱՆ

Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ուզդ. մուկն	մկունք	Տիրան	Տիրանք
Սեռ. մկան	մկանց	Տիրանայ	Տիրանաց
Տր. մկան	մկանց	Տիրանայ	Տիրանաց
Հայց. դմուկն	դմկունս	դՏիրան	դՏիրանս
Բաց. ի մկանէ	ի մկանց	ի Տիրանայ	ի Տիրանաց
Գործ. մկամբ	մկամբք	Տիրանաւ	Տիրանաւք

1. Ներքին թեքման «ա» հոլովման են պատկանում նաև «ութիւն» և «իւն» կապակցություններով «վերջավորվող» բառերը, որոնց «իւ» երկբարբառը վերածվում է «եա» երկբարբառի (ուզդ. նեղութիւն, սեռ. նեղութեան, տր. նեղութեան, հայց. զնեղութիւն, բաց. ի նեղութենէ, գործ. նեղութեամբ, Հոգն. ուզդ. նեղութիւնք, սեռ. նեղութեանց, բաց. ի նեղութեանց, գործ. նեղութեամբք)։ Բացառականում մեկ վանկ անելու հետևանքով «եա» երկբարբառը վերածվում է «ե-ի. բացի ձիւն» (ի ձեանէ) բառից։

Գործիական հոլովի արմատական «ն» ուղղայինը վերածվում է «մ» շրթնառնգայինի՝ հաջորդող շրթնային ք-ի ազդեցության տակ։ Գրաբարում «ր», «պ», «փ» շրթնայիններից առաջ սովորաբար լինում է «մ»։

2. Ներքին թեքման «ա» հոլովման են պատկանում նաև «հայր», «մայր», «եղբայր» բառերը, որոնց արմատական յ-ն սեռական, տրական և բացառական հոլովներում փոխարինվում է լ-ով (այ>ալ): Հոլովման ընթացքում արմատական Թ-ն նույնանում է հոլովիչի հետ: Գրաբարում մի առանձին օրինաչափություն է յ-ի փոխարինվելը լ-ով, քանի որ յ կիսաձայնը հնչակից է ի-ին, որը նույնպես փոխարինվում է լ-ով:

Եզակի	Հոգնակի
Ուղղ. հայր	հարք
Սեռ. հաւր	հարց
Տր. հաւր	հարց
Հայց. դհայր	դհարս
Բաց. ի հաւրէ	ի հարց
Գործ. հարբ	հարբք

Հոգնակի սեռ., տր. և բաց. ձևերը փոխարինվում են նաև ետրամիջ ձևով, որ նշանակում է, թե այդ բառը երբեք ունեցել է «Ա» հոլովակազմիչ, ուստի դա ավելի հին ձև է:

3. Ներքին թեքման նույն «ա» հոլովման է պատկանում նաև «այր» բառը, որ ստանալով սեռականի «ն» հոլովակազմիչը, կորցնում է յ-ն, ինչպես «հայր» բառը, որ նույնպես բաղաձայն հոլովակազմիչ ստանալու դեպքում կորցնում է յ-ն (հարբ, հարք, հարց և այլն): Հավանական է՝ այդ հետևանք է այն բանի, որ բաղաձայն հոլովակազմիչը կես վանկ ավելացնելով բառին՝ նպաստում է յ-ի անկմանը):

Եզակի	Հոգնակի
Ուղղ. այր	արք
Սեռ. առն	արանց
Տր. առն	արանց
Հայց. դայր	դարս
Բաց. յառնէ	յարանց
Գործ. արամբ	արամբք

Սեռականում, տրականում և բացառականում «ը»-ի վերածվելը ա-ի բացատրվում է «ն» հոլովակազմիչով, որովհետև գրաբարում ն-ից առաջ հաճախ լինում է «ն»: Մյուս հոլովներում ավելացած Թ-ն (արամբք և այլն) բացատրվում է 3 բաղաձայնի կուտակմամբ (րմբ, րնց): Դրան ապացույց կարող է լինել այն, որ «տեարց» ձևի մեջ, որտեղ արց ստացվում է «յր-ից, «ա» չի ավելանում (տէր-տիայր-տեարց):

«Տէր» բառը, որ «տի այր» բարդ բառն է (տի—մեծ, այր—մարդ, տի—այր=տէր=մեծ մարդ), հոլովման ժամանակ ենթարկվում է նույն կանոնին, միայն՝ կազմված լինելով տի և այր բառերից, սեռականում տարրալուծվում է իր բաղադրիչ մասերին՝ տի և առն: Միասին գրվելու դեպքում ա-ից առաջ ի-ն փոխարինվում է ե-ով, ինչպես մյուս բոլոր դեպքերում, գրաբարում հայերեն «ի»-ն կապակցութունը հաղվագյուս է:

«Տէր» բառի ե-ն=այ երկբարբառի, մի երևույթ, որ գրաբարի մեջ հաղվագյուս է, մինչդեռ ժողովրդական լեզուների մեջ, հատկապես Երևանի

բարբառում, ամենուրեք, իսկ մեր գրական լեզվի մեջ որոշ բառերում, օրինաչափություն է (հէր, մէր, փեսէք, էզուց և այլն):

Եզակի	Հօգնակի
Ուղղ. տէր	տեարք
Սեռ. տեառն	տեարց (կամ՝ տերանց)
Տրակ. տեառն	տեարց (կամ՝ տերանց)
Հայց. զաէր	զտեարս
Բաց. ի տեառնէ	ի տեարց (կամ՝ ի տերանց)
Գործ. տերամբ	տերամբք կամ տեարբք

Ե ՀՈԼՈՎՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ՔԵՔՈՒՄ

Եզակի	Հօգնակի
Ուղղ. տարր	տարերք
Սեռ. տարեր	տարերց
Տրակ. տարեր	տարերց
Հայց. զտարր	զտարերս
Բաց. ի տարերէ	ի տարերց
Գործ. տարերբ	տարերբք

Այս հոլովման բառերից մի քանիսը հոգնակի սեռականում ունեն «աց» վերջավորություն:

«Ե» հոլովման է պատկանում գրաբարի քերականության դասագրքում մինչև այժմ բացառություն համարվող «քոյր» բառը (ահա վերևում):

Սեռականում «քոյր» բառի արմատական ընդ վերածվում է նմանահնչյուն ու ի (հավանական է «ն» հոլովակադմիչի ազդեցությամբ, որ հետո ընկել է): Այդ փոփոխությունը անգի չի ունենում, երբ բառը վերջավորվում է բաղաձայն հոլովակադմիչով:

«Ե» հոլովման արտաքին թեքում չկա:

Ի ՀՈԼՈՎՈՒՄ

ԱՄՏԱՔԻՆ ՔԵՔՈՒՄ

Եզակի	Հօգնակի
Ուղղ. նետ	նետք
Սեռ. նեաի	նետից
Տր. նեաի	նետից
Հայց. զնետ	զնետս
Բաց. ի նետէ	ի նետից
Գործ. նետիւ	նետիւք

Այս հոլովման բառերում բացառականում «ի» հոլովիչը սղվում է:

Ո ՀՈԼՈՎՈՒՄ

ԱՐՑԱՔԻՆ ԹԵՔՈՒՄ

	Նզակի	Հոգնակի
Ուղղ.	դեղ	դեղք
Սեռ.	դեղոյ	դեղոց
Տր.	դեղոյ	դեղոց
Հայց.	զդեղ	զդեղս
Բաց.	ի դեղոյ	ի դեղոց
Գործ.	դեղով	դեղովք

1. «Ո» հոլովման են պատկանում բոլոր անորոշ դերբայները. օրինակ՝ ուղղ. սիրել, սեռ. սիրելոյ, տր. սիրելոյ, հայց. զսիրել, բաց. ի սիրելոյ, գործ. սիրելով:

Դերբայների հոլովումը հոգնակի թիվ չունի:

2. «Ո» հոլովման են պատկանում նաև անցյալ դերբայները, որոնք արականում ունենում են նաև եռմասն վերջավորութուն. օրինակ՝ գնացեալ, գնացելոյ, գնացելում... գնացեալք, գնացելոց և այլն:

3. «Ո» հոլովման պատկանող մի շարք բառեր արականում սառնում են նաև եռմասն վերջավորութուն, օրինակ՝ մարդ, մարդոյ, մարդում... հին, հնոյ, հնում... նոր, նորոյ, նորում... աջ, աջոյ, աջում, դաջ, յաջմէ... մի, միոյ, միում...

4. «Ո» հոլովումը ներքին թեքում չունի:

ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ

ԱՐՑԱՔԻՆ ԹԵՔՈՒՄ

	Նզակի	Հոգնակի	Նզակի	Հոգնակի
Ուղղ.	աւր	աւուրք	զարդ	զարդք
Սեռ.	աւուր	աւուրց	զարդու	զարդուց
Տր.	աւուր	աւուրց	զարդու	զարդուց
Հայց.	զաւր	զաւուրս	զզարդ	զզարդս
Բաց.	յաւրէ	յաւուրց	ի զարդու	ի զարդուց
Գործ.	աւուրբ	աւուրբք	զարդու	զարդուք

Ջարդ, դաս, զգեստ և նման բառերը բացառականում ունենում են նաև «ի զարդուէ» և «ի զարդէ» ձևերը:

1. Ներքին թեքման եռա հոլովման է պատկանում նաև «աիւ» միակ բառը, որ սառնում է «նջ» (եան) հոլովակազմիչը:

Նզակի

Ուղղ.	աիւ	
Սեռ.	աուընջեան	հոդնակիում գործ են
Տր.	աուընջեան	ածվում միայն տիւ և տիւս ձևերը
Հայց.	դաիւ	
Բաց.	ի աուընջենէ	
Գործ.	աուընջեամբ	

2. Ներքին թեքման «ու» հոլովման են պատկանում նաև ասր, ծազր, մեղր գոյականները և բանձր, փաֆր, ծաճր, մեճր, քաղցր, բարձր ածականները, որոնք բառալեզիւ արմատական արձ-ն փոխում են «ու»-ի (ավելի ճիշտ՝ դրանք ստացել են ներքին թեքման «ու» հոլովիչը՝ ծազաւր, մեզաւր, բարձաւր և այլն, ապա կորցրել ր-ն)։ օրինակ.

	Նզական	Հագնակի
Ուզգ.	ծանր	ծանունք
Սեռ.	ծանու	ծանունց
Տր.	ծանու	ծանունց
Հայց.	զծանր	զծանունս
Բաց.	ի ծանուէ կամ ծանու	ի ծանունց
Գործ.	ծանու կամ ծանումբ	ծանումբք

Հոգնակիում երկացող «ն»-ն սեռական հոլովակազմիչն է, որ եզակիում ընկել է, բայց գործիականի ծանումբ>ծանունք ձևի մեջ մատնում է իրեն։ Այս հինգ պարզ հոլովումներէց բացի՝ կան նաև խառը տիպի հոլովումներ։ Խառը տիպի հոլովում ունեցող բառերը մինչև եզակի բացառականը պատկանում են մեկ հոլովման, իսկ գործիականից սկսած՝ մի այլ հոլովման։ Խառը տիպի հիմնական հոլովումները 4 են՝ «ի-ա», «ո-ա», «ե-ի» և «ու-ա»։

Ի.Ա.

ԱՐՑԱՔԻՆ ԹԵՔՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ

	Նզական	Հագնակի	Նզական	Հագնակի
Ուզգ.	իւր	իւրք	անձն	անձինք
Սեռ.	իւրի	իւրաց	անձին	անձանց
Տր.	իւրի	իւրաց	անձին	անձանց
Հայց.	զիւր	զիւրս	զանձն	զանձինս
Բաց.	յիւրէ	յիւրաց	յանձնէ	յանձանց
Գոր.	իւրաւ	իւրաւք	անձամբ	անձամբք

1. Այս հոլովման պատկանող որոշ բառեր բացառականում ունենում են նաև անկ վերջավորութիւն (օրինակ՝ ի թոռանէ)։

2. Այս հոլովման պատկանող «ձեռն» բառը եզակիում ունի ներքին թեքում, հոգնակիում՝ արտաքին՝ ձեռն-ձեռին-ձեռաց։

3. «Ուտն» բառը եզակիում ներքին թեքում ունի, բացառականում և գործիականում ստանում է «ա» հոլովիչ, իսկ հոգնակիում ունի արտաքին թեքում՝ և «ի» հոլովիչ (ուան, ոտին, յոտանէ, ոտամբ, ոտից, ոտիւք)։

Ո.Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

ԱՐՑԱՔԻՆ ԹԵՔՈՒՄ

	Նզական	Հագնակի
Ուզգ.	գինի	գինիք
Սեռ.	գինւոյ	գինեաց
Տր.	գինւոյ	գինեաց
Հայց.	զգինի	զգինիս
Բաց.	ի գինւոյ	ի գինեաց
Գործ.	գինեաւ	գինեաւք

«Ի» ձայնավորը թեք հոլովի մեջ «ո»-ից առաջ փոխարինվում է «ւ»-ով, «ա»-ից առաջ՝ «ե»-ով: Այս պատճառով էլ հայերեն բառերի մեջ «իա» կապակցություն չկա (ղաստիարակ, Մարիամ և նման բառերը փոխառյալ են): Այս հոլովման պատկանող բառերի զգալի մասը գործ էածվում նաև «ջ» հոլովակազմիչով. օրինակ՝ գիմի-գիմուջ, տարի-տարուջ, այգի-այգուջ. քարի-քարուջ և այլն:

Ու-ա հոլովման են պատկանում նաև «կին» և «տիկին» բառերը, որ եզակի սեռականում ունենում են «ջ» հոլովակազմիչը:

	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	կին	կանայք	տիկին	տիկնայք
Սեռ.	կնոջ	կանաց	տիկնոջ	տիկնայց (տիկնանց)
Տր.	կնոջ	կանաց	տիկնոջ	տիկնայց (տիկնանց)
Հայց.	դին	դկանայս	դտիկին	դտիկնայս
Բաց.	ի կնոջէ	ի կանաց	ի տիկնոջէ	ի տիկնայց (տիկնանց)
Գործ.	կնաւ	կնաւք	տիկնաւ կամ տիկնամբ	տիկնաւք (տիկնամբք)

«կին» բառի համար ավելի սովորական են հետևյալ ձևերը. եզ. զործ. կանամբ, հոգ. սեռ. կանանց, տրակ. կանանց, բաց. ի կանանց, զործ. կանամբք: Այս ձևերի մեջ երևացող «ն»-ն սեռականի հոլովակազմիչ «ն»-ն է:

Ե.Ի ՀՈԼՈՎՈՒՄ

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	գիւղ	գիւղք
Սեռ.	գիւղի	գիւղից
Տր.	գիւղի	գիւղից
Հայց.	գգիւղ	գգիւղս
Բաց.	ի գիւղից	ի գիւղից
Գործ.	գիւղիւ	գիւղիւք

«Ե-ի» հոլովման է պատկանում միայն «գիւղ» բառը: Այս հոլովման առաջին կերպը պատկանում է ներքին թեքման, իսկ երկրորդը արտաքին թեքման:

ՈՒ-Ա ՀՈԼՈՎՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ

Եզակի	Հոգնակի
Ուղղ.	բարձր
Սեռ.	բարձու
Տր.	բարձու
Հայց.	գբարձր
Բաց.	ի բարձուէ
Գործ.	բարձամբ

ԱՐՏԱՔԻՆ ԹԵՔՈՒՄ

Եզակի	Հոգնակի
երէց	երիցունք
երիցու	երիցանց
երիցու	երիցանց
գերէց	գերիցունս
յերիցու	յերիցանց
երիցամբ	երիցամբք

Գործիականում լինում են նաև՝ բարձու և երիցու ձևերը: Այս հոլովման են պատկանում միայն այս երկու բառերը:

Այս կամ այն հոլովման պատկանող բառը երբեմն մի քանի տարբերակներ է ունենում, որ գրաբարի հոլովման տեսության համար առանձին արժեք չունի (օրինակ՝ հարց-հարանց, երիցու-երիցամբ, բարձու-բարձամբ, ի բեռանէ-ի բեռնէ և այլն)։

Գրաբարի գոյական անունների հոլովման այս տեսությունը ցույց է տալիս, որ գրաբարը զարմանալի օրինաչափություններ ունեցող լեզու է, նրա հոլովումը բացառություններ չունի և աստիճանաբար կցականությունը կորցնելով (հոլովակազմիչների կորուստ եզակի սեռականում, տրականում, հայցականում, երբեմն և բացառականում ու գործիականում), ապրում է անցումն դեպի մաքուր թեքականությունը։

Այդ նաև ցույց է տալիս, թե որքան կատարյալ է իր սխեմայի մեջ մեր գրաբարը ի հակադրություն լատիներենի և հունարենի հոլովական սխեմայի խառնաշփոթության, որով նրանք գրաբարի հետ ոչ միայն չափվել չեն կարող, այլ նրա սովորը կարող են լինել միայն։

Բայց այդ միաժամանակ ցույց է տալիս, որ գրավոր դառնալուց առաջ գրաբարը երկար ժամանակ բանավոր է մշակվել, որովհետև այսքան օրինաչափ և առանց բացառությունների կարող է լինել միայն բանավոր լեզուն։ Հենց գրաբարի օրինակի վրա տեսնում ենք դրա ճշմարտությունը, որովհետև գիր ստանալուց հետո, դրական լեզու դառնալուց մի 40—50 տարի հետո, գրաբարի սխեմայի օրինաչափությունը խախտվում է, նա «փչանում է», որ հին գիտնականները համարում են վերջ նրա ոսկեդարին։ Ուստի միմյան գրերի գյուտը գրաբարը եղել է քանավոր լեզու։

А. Гарибян

О стадияльной системе древне-армянского склонения

Р Е З Ю М Е

В данной работе рассматривается вопрос древне-армянского склонения. Дается обзор грамматической литературы более или менее известных авторов, начиная с Шредера (автора первой книги по истории армянского языка, изданной в 1711 году) до современных авторов. Указывается, что все авторы армянской грамматики древне-армянское склонение рассматривали в аспекте грамматического построения древних классических языков, латинского и греческого. Поэтому система древне-армянского склонения не была до конца раскрыта даже крупнейшими грамматистами. Автор, рассматривая систему склонения древне-армянского языка с точки зрения стадияльного развития языков, раскрывает эту систему в новом аспекте и устанавливает следующее:

а) древне-армянское склонение сочетает две лингвистические стадии—агглютинативную и флективную;

б) флективная стадия древне-армянского склонения ярко выражена как внутренней, так и внешней флексией через показатели склонения, а именно: гласными, *ա, ե, ի, ո* и дифтонгом *ու*: при внеш-

ней флексии к основе слова присоединяется какой либо из вышеупомянутых показателей, а при внутренней флексии корневой дифтонг переходит в один из этих показателей или в корне между согласными появляется показатель склонения, например:

Имен. Винит.	Արշակ	տուն	քոյր	գետ	գարգ	տար
Род. Дат.	Արշակի	տան	քեռ	գետոյ	գարգու	տար
Отл.	յԱրշակայ	ի տանէ	ի քեռէ	ի գետոյ	ի գարգուէ	յտարէ
Твор.	Արշակաւ	տամբ	քերբ	գետով	գարգու	տարբ

Признаком же агглютинации являются частички-прилепы, показатели отдельных падежей. Такие показатели суть следующие:

	Единств. число	Множеств. число
Имен.	нет	«р»
Род.	«ն» «ջ» «նջ» или нет	«ց»
Дат.	«ն» «ջ» «նջ» или нет	«ց»
Вин.	нет	«
Отл.	«է»	«ց»
Твор.	«ւ» «վ» «բ»	«ւբ» «վբ» «բբ»

При всех склонениях показатели падежей или агглютинативные частички одни и те же. Они выпадают лишь в родительном и дательном падежах в большинстве слов и в отложительном падеже единственного числа для слов, подвергающихся склонению *ա, ո*.

Заметно, что показатели родительного и дательного падежей постепенно утеряны в древне-армянском склонении, а показатели флексии сохраняются последовательно и без исключения. Это свидетельствует об ослаблении агглютинативной стадии древне-армянского склонения и об усилении его флективной стадии. Отсюда заключаем, что древне-армянский язык переживает переходную стадию от агглютинативной к флективной. А тот факт, что склонение древне-армянского языка до конца закономерно и не знает никакого исключения, указывает на то, что древне-армянский язык прошел долгий путь бесписьменного развития.